

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՊԱԳԱՅԻ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հարգարժան համագյուղացիներ և հյուրեր այսօր Ձեր քննարկմանն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագայի գյուղապետարանի և ավագանու կողմից 2013թվականի աշխատանքային ծրագրով 1-ին կիսամյակում նախատեսված աշխատանքների կատարողականի մասին :

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին - առանձին և վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը :

**1. Ֆինանսների բնագավառ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագայի գյուղական համայնքի բյուջեով 2013թվականին հաստատվել են .

Եկամուտներ ընդամենը ` **35171.3** հազար դրամ

1. վարչական բյուջե ` **31659.8** հազար դրամ

2 . ֆոնդային բյուջե ` **35714.5** հազար

1)Վարչական բյուջեով հաստատվել են եկամուտներ `

h/h	եկամուտներ	2013թ. հաստատված	տարեկան կատարողա կանը %	1- ին կիսամյակ	1-ին կիսամյակի կատարողա կանը	կատարողականը առ 01.07.2013թ. %
1	հողի հարկ	4281.4	51.7	1500.0	2225.1	148.3
2	գույքահարկ	2612.4	039.8	1205.4	1039.2	86.1
3	վարձակալական հողի հարկ	1350.0	30.3	560.0	409.7	73.1
4	տեղական տուրքեր	379.0	52.3	126.0	198.1	157.2
5	այլ եկամուտ	-	-	-	100.0	100.0
6	ընդամենը սեփական եկամուտներ	8622.8	46.0	3391.4	3972.1	117.1
7	մնացորդ առ 01.01.2013թ.	-	-	-	-	-
8	դոտացիա	23037.0	50	11518.5	11518.5	100.0
	<b>Ընդամենը</b>	<b>31659.8</b>	<b>48.9</b>	<b>14909.9</b>	<b>15490.6</b>	<b>103.9</b>

2.) ֆոնդային բյուջեով

h/h	եկամուտներ	2013թ. հաստատված	1-ին կիսամյակ	1-ին կիսամյակի կատարողականը	կատարողականը առ 01.07.2013թ. %
1	հողի օտարումից	3000.0	3000.0	1246.1	-
2	մնացորդ առ 01.01.2013թ.	511.5	511.5	511.5	100.0
3	Ընդամենը	3511.5	3511.5	1757.6	50.0

ընդամենը եկամուտներ ` 16736.1 հազար դրամ

2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

1) աշխատավարձ	6534.0
2) պարգևատրում	461.0
3) էլ. ծախսեր	172.0
4) ապահովագրություն	25.0
5) կապի ծառայություն	40.0
6) գրասենյականին ծախսեր	134.0
7) տրանսպորտային նյութեր	200.0
8) ընդհանուր բնույթի այլ	71.0
9) գործուղում	0.0
10) մեքենաների և սարքավորումների ընդ, նորոգում	160
12) տեղկատվական	25.0
13) նախագծահետազոտական աշխատանքներ	1100.0

ԸՆԴԱՄԵՆԸ ` 9169.0 հազար դրամ

2. Կրթության և գիտության գծով

1) սուբսիդիա 780.0

ԸՆԴԱՄԵՆԸ ` 780.0 հազար դրամ

3. Սպորտ , հանգիստ , մշակույթ և կրոն

1) աշխատավարձ	759.8
2) սոց. վճար	0.0
3) գրասենյակային նյութեր	0.0
4) նպատակային այլ նյութեր	0.0
5) վարչական սարքավորումներ	0.0
6) նյութեր և պարագաներ	392.3

ԸՆԴԱՄԵՆԸ ` 1152.1 հազար դրամ

4. Սոց. օգնություն	1000.0 հազար դրամ
5. Այլ մշակութային կազմակերպություններ `	1083.7 հազար դրամ
6. Աղբաթափում	1200.0 հազար դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ` 14384.8 հազար դրամ

## 2. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

- 1) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է՝ քաղաքացիների ընդունելության օր , որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ : Քաղաքացիներից առաջին կիսամյակում ստացվել է 182 դիմում - բողոք , որից 182 -ն էլ բավարարվել է :
- 2) Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը
- 3) Ապահովվել է ընտրական տեղամասային կենտրոնում քվեարկության համար անհրաժեշտ կահավորումը

## 3 . Հասարակական կարգի պահպանության բնագավառ

- 4) Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն , մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն իրականացվել

## 4. Պաշտպանության բնագավառում

- 5) Աջակցել ենք գարնանային գորակոչին , ուսումնավարժական հավաքներին
- 6) Աջակցել ենք ՔՊ մարմինների գործունեությանը
- 7) Աջակցում է բնակչության , երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը

## 5.Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառ

- 8) Կառուցապատողներին տրվել են ճարտարապետահատակագծային առաջադրանքներ , համաձայնեցվել են ճարտարապետաշինարարական նախագծեր , շինարարության / քննման / թույլտվություններ
- 9) Չափագրվել և ուղղումներ են կատարվել համայնքի որոշակի հողատարածքներում
- 10) Աջակցել ենք բնակիչներին նոր կառուցվող բնակելի տների նախագծերի մշակման և կատալոգների տրամադրմամբ
- 11) Բացվել է քաղաքացիների կողմից ապօրինի փակված ճանապարհներ
- 12) վերահսկում է հողերի նպատակային օգտագործումն և պահպանումը

## 6.Կոմունալ տնտեսության բնագավառ

- 13) Համայնքում կատարվում է աղբաթափություն
- 14) Կազմակերպվում է կանաչ գոտիների խնամքն ու պահպանությունը

## 7. Տրանսպորտի բնագավառ

15) Կարգավորել ենք համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը

## 8. Առևտրի և ծառայությունների բնագավառ

16) Հսկողություն է իրականացվում համայնքի առևտրի , հանրային սննդի ծառայությունների ոլորտում

## 9. Կրթության , մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

17) Աշխատում են համայնքի մշակույթի տունը , գրադարանը

18) Մրջոցներ են ձեռնարկվում նոր աշխատատեղերի ստեղծման համար

19) Համայնքում կազմակերպվել են միջոցառումներ

- Գյուղապետարանի , « Մշակույթ » Միացյալ տնօրինության , « Ապագայի բուժ . ամբուլատորիա » ՊՓԲԸ –ի և « Ապագայի մանկապարտեզ» ՀՈԱԿ –ի աշխատողների համար կազմակերպվել է Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ հանդես , համերգ ,
- Նվիրված ՀՀ բանակի 21 -ամյակին , համայնքի ժամկետային զին ծառայողներին տրվել են շնորհակալագրեր
- Նվիրված կանանց միջազգային օրվան ` մարտի 8-ին , մանկապարտեզի , մշակույթի տան և բուժ. ամբուլատորիայի կին աշխատակիցների համար կազմակերպվել է համերգ
- Նվիրված Մեծ Եղեռնի 98 ամյակին
- Նվիրված Աշխատանքի տոնին ` գյուղապետարանի և մշակույթի տան աշխատակիցների համար կազմակերպվել է համերգ
- Նվիրված հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 68- ամյակին և Շուշիի ազատագրման 21 - ամյակին , մեծարվել են մասնակիցները
- Նվիրված Հանրապետության տոնին
- Նվիրված Երեխաների պաշտպանության օրվան ` հունիսի 1-ին

## 10. Առողջապահության , ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բազավառում

20) Աշխատում են համայնքի բուժ. ամբուլատորիան , հունա -հռոմեկան ոճի ըմբշամարտի մարզադպրոցը

21) Կառուցվում է նոր մարզադպրոց

## 11. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում

22) Աջակցել ենք սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը : համայնքի 17 ընտանիքների տրվել է դրամական օգնություն ,

## 12. Գյուղատնտեսության բնագավառում

- 23) Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը
- 24) Աջակցել ենք ձեռք բերելու ագրոտական պարարտանյութ
- 25) Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ
- 26) կառուցվում է միջտնտեսային ոռոգման համակարգ

## 13. Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում

- 27) Պահպանվում են համայնքի կանաչ գոտիներն ու ծառերը

## Ապագայի գյուղական համայնքում 2013թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1. Համայնքի բնակավայրի և դաշտամիջյան ճանապարհների հարթեցում և խճապատում
2. Ոռոգման ներտնտեսային ցանցի մաքրում
3. Ոռոգման միջտնտեսային համակարգի կառուցում
4. Համայնքում կառուցել մարզադպրոց , ՀՀԿ կուսակցության , Արմավիրի մարզպետի , Ավագ Փաթեյանի և այլ բարերարների աջակցությամբ
5. « Զորավար Անդրանիկի , Գևորգ Չաուչի և Ֆիդայական շարժման մյուս մասնակիցների » հուշարձանի տեղադրում
6. Տեղադրել էլեկտրաէներգիայի նոր ենթակայան
7. Գյուղապետարանի շենքի վերանորոգում
8. Ապագայի միջնակարգ դպրոցի մուտքի աստիճանների սալիկապատում
9. Համայնքում կազմակերպել միջոցառումներ

- Նվիրված գիտելիքի օրվան
- Նվիրված ՀՀ անկախության օրվան
- Նվիրված ուսուցչի օրվան
- Նվիրված գրադարանավարի օրվան
- Նվիրված տեղական ինքնակառավարման մարմիններին
- Նվիրված գյուղի աշխատողին
- Նվիրված Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին

ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ն. ՄԱՐԿՈՍՅԱՆ



## ՔԱՂՎԱԾՔ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՊԱԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2013թվականի հուլիսի 13-ին ժամը 15<sup>00</sup> – ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագայի գյուղական համայնքի անդամների ընդհանուր ժողովը՝ համայնքի ղեկավարի 2013թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների հաշվետվության քննարկման վերաբերյալ :

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի ավագանու անդամները , համայնքի անդամները , թվով 30-ը , գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները :

Նախագահությամբ՝ Ա. Բարսեղյանի

Քարտուղարությամբ՝ Ն. Մարկոսյանի

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագայի գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ :

( Ձեկուցող համայնքի ղեկավար՝ Ա. Բարսեղյան )

### Արտահայտվեցին՝

1. Համայնքի անդամ՝ Մխիթար Մխիթարյանը իր շնորհակալությունը հայտնեց համայնքի ղեկավարին 2013թվականի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների համար և մաղթեց նորանոր ձեռքբերումներ ի շահ համայնքի և անդամների : Համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքները գնահատել բավարար :
2. Համայնքի անդամ՝ Քաջիկ Խաչատրյանը համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքները գնահատեց բավարար :
3. Համայնքի անդամ՝ Ալբերտ Հակոբյանը իր գոհունակությունը հայտնեց և համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները 2013թվականի 1-ին կիսամյակում գնահատեց բավարար :

## ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագայի գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքները գնահատել բավարար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին ( Ա.Բարսեղյանին )
  - 1) Համայնքի անդամների ընդհանուր ժողովում բարձրացված հիմնահարցերին տալ համապատասխան լուծում :
  - 2) Համայնքի անդամների ընդհանուր ժողովի արդյունքների մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան :

Նախագահ

Քարտուղար



Ա. Բարսեղյան

Ն. Մարկոսյան

Իսկականի հետ ճիշտ է